

ՍԱԽԱՐՈՎ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ ԿՈՐՊԱՉՈՎԸ

ՂԱՐԱՔԱՂԻ ԿՈՄԻՏԷԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՎ

“U.S. News and World Report” շաբաթաթերթին 30 Յունուարի թիւով լոյս տեսած է Ղարաքաղի Կոմիտէի անդամներուն ձերբակալումին կապակցութեամբ Սախարովի խիստ արտայայտութիւնը Կորպաչովի նկատմամբ: Շաբաթաթերթին խմբագրապետը Մոսկուայի մէջ հարցազրոյց մը ունեցած է անուանի գիտնականին հետ, որ կ'արտայայտուի հետեւեալ խօսքերով:—

Կորպաչով քաջաբար վարուեցաւ միջազգային կրկեսին մէջ, նոյնպէս նաեւ կարգ մը խելացի յառաջացումներ կատարեց երկրին մէջ, սակայն տեղական քաղաքականութեան մէջ կարգ մը լուրջ կարեւորութիւններ կան, ի մասնաւորի՝ ռամկավարացումի քաղաքականութեան եւ միջ-ազգային յարաբերութիւններուն մէջ:

Ատրպէյնացիներու եւ հայերու միջեւ ճակատումը փորձաքար մըն էր Կորպաչովի ազգային քաղաքականութեան: Դժբախտաբար այս հարցով երեւան ելաւ անոր շատ գէշ մտայնումը, զոր կարելի է մեկնա-



բանել որպէս ժողովրդային խաւերէ վախ մը: Եւ հոս կ'ակնարկեմ Հայաստանի երկրաշարժէն ետք Ղարաքաղի Կոմիտէի անդամներուն ձերբակալութեան:

Լեռնային Ղարաքաղի այս հակամարտութեան սկիզբէն իսկ, Կորպաչով բռնեց շատ միակողմանի, հակահայ դիրքաւորում մը: Այդ ցուցաւ կեդրոնական մամուլին մէջ, որ աւելի բննադատեց Հայաստանի գործադուլները քան Ատրպէյնանի մէջ հայերու սպանութիւնները: Յետոյ, երբ Հայաստանի հայերը երկրաշարժի հարուածին տակ կը գրտնուէին, Ղարաքաղի Կոմիտէի անդամները ձերբակալուեցան: Անոնցմէ 7 հոգի ձերբակալուեցան 10 Դեկտեմբերին, 1ը 27 Դեկտեմբերին, 4ը՝ որոնք պահուրտած էին՝ 7 Յունուարին:

Այս ձերբակալութիւնները ամբողջովին անհրաժեշտ չէին: Կոմիտէն անգնահատելի օգնութիւն ցոյց կուտար երկրաշարժէն ետք: Անոր անդամները զօրակոչի ենթարկուած էին եւ կ'օգնէին շրջաններուն բնակիչներուն, որոնք մոռցուած էին իշխանութիւններուն կողմէ: Անոնք կազմակերպեցին նաեւ զանազան խումբեր, որոնք եկան Մոսկուայէն եւ այլ վայրերէ օգնելու համար փրկութեան աշխատանքներուն, նոյնիսկ երբ իշխանութիւնները ըսին որ այլեւս կամաւորներու պէտքը չկար: Սակայն իշխանութիւնները

վախցան Հայաստանի ժողովուրդին վրայ այդ մարդոց ունեցած ազդեցութեանն եւ անոնց հանդէպ յարգանքէն:

Այդ 12 գործիչները Մոսկուա տարուեցան եւ ալգելափակուեցան Պուրիֆայի եւ այլ բանտերու մէջ: Ինչ որ հոս կը նկատենք, վերադարձն է դէպի Խ. Միութեան մէջ խղճմտանքի բանտարկեալներու շրջանին, վերադարձը՝ օրինական խղճմտանքի նշումին: Կը խորհիմ որ այդ ձերբակալութիւնները կատարուեցան Կորպաչովի հաւանութեամբ: Ան շատ վիրաւորուած էր երկրաշարժէն ետք՝ Հայաստան կատարած իր նամբորդութեան ընթացքին ցոյց տրուած խեղճ ընդունելութենէն:

Խղճմտանքի բանտարկեալներու շրջանին այս վերադարձով, կը խորհիմ որ Մոսկուայի մէջ ծրագրուած Մարդկային իրաւանց նուիրուած միջազգային համաժողովը պէտք է առկախուի:

Խղճմտանքի բանտարկեալներուն վերադարձի այս հարցը մարդկային իրաւանց խնդրով միակ մտահոգութիւնը չէ Հայաստանի մէջ. կայ նաեւ շարունակուող պարտադիր վերադարձը, դէպի Ատրպէյնան, հայ գաղթականներուն, հակառակ անոր որ հոն կացութիւնը շատ ձգտուած եւ մտահոգիչ է անոնց համար:

Մենք (խօսքը կը վերաբերի իր կնոջ՝ Էլէնա Պոննըրի, Խ.) Հայաստան այցելեցինք երկրաշարժէն ետք, բայց մեզի ըսուեցաւ որ երկրորդ այցելութիւն մը, զոր մենք կը ծրագրէինք, «անբաղձալի» էր, որովհետեւ ան կրնար գայրացնմել ատրպէյնացիները: Ասիկա ինձի անձնապէս ըսուեցաւ Ալեքսանտր Եաֆուի (Քաղզիւանի անդամ, Խ.) եւ Ռիժոֆովի (Վարչապետ) հետ խօսակցութեանս ընթացքին: Ակնյայտօրէն, այդ գաղափարները կուգային Կորպաչովէն: Այս ամէնը ցոյց կուտայ, թէ մարդկային իրաւանց գծով Խ. Միութեան մէջ հարցերը այլեւս դէպի լաւը չեն երթար, այլ իրողապէս, ետ քաշու մըն է որ տեղի կ'ունենայ:

Կորպաչով կը խօսի ռամկավարութեան մասին, սակայն իրապէս կը վախնայ մարդերէ, որոնք իրենց անձնական որոշումները կ'առնեն: Ասիկա երեւան կուգայ նաեւ անժողովրդավարական այն քաղաքի օրէնքներէն որ ինք առաջ քշեց: Ուրիշ անժողովրդավար առաջնորդ, որ պիտի գայ իրմէ ետք, կրնայ այս օրէնքները գործածել ի նպաստ իր նշիչ ծրագիրներուն: Այս բոլոր հակասութիւններու լոյսին տակ, դժուար է այժմ ըսել թէ ճիշտ է Կորպաչով:

Խորհրդային Միութեան Խորհրդարանական ընտրութիւններուն, որոնք տեղի պիտի ունենան 26 Մարտին, Սախարով թեկնածու դարձած էր Մոսկուայի «Հոկտեմբերեան» շրջանէն: Այժմ ան թեկնածու նշանակուած է նաեւ ոչ-օրինական «Յիշատակում» խմբակին կողմէ: Այս ձեւոր բնագիտութեան Նոպէլեան մրցանակաւորին երկու առիթ կը տրուի մաս կազմելու միութենական խորհրդարանին: Սախարովի թեկնածութիւնը առաջին առիթը մերժուած էր Գիտական Ակադեմիային կողմէ:

Սախարով միակ թեկնածուն չէ. ան իր դէմ ունի շատ հզօր երկու մրցակիցներ. Քաղզիւանի անդամ եւ ռուսական հանրապետութեան նա-

խազահ Վիթակի Վորոթնիքովը եւ
Մոսկուայի նախկին կուսակցապետ
եւ բարենորոգչական ծրագիրներու
պաշտպան Պորիս Ելցինը:

Նորակազմ Գոնկրէսը պիտի բաղ-
կանայ 2250 ներկայացուցիչներէ,
որոնցմէ 400 անդամներ պիտի մտնեն
Գերագոյն Խորհուրդին կազմին
մէջ:

Մոսկուայի մէջ ընտրական ժողովի
ընթացքին Սիլվա Կապուտիկեան

ներկայացուցած է Սախարովը իբրեւ
«Խորհրդային ժողովուրդի խիղճը»:

Սախարով ներկայացուցած է իր
ընտրական ծրագիրը - Ղարաբաղի
Կոմիտէի անդամներուն ազատ ար-
ձակում, կորիզային կեղրոններու
կառուցման խնդիր, խօսքի, մամու-
լի, ցոյցի եւ ճամբորդութեան ազա-
տութեան հարցեր, բարենորոգում-
ներ: